



2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ անանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 100 000 000 (Մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ծառայությունների մատուցման գները ներկայացված է հավելված N 1.1-ում:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.14 կետով կնքվելիք վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնույթագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորակն) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորակն) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:**

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձևերի բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 27 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՑԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե  
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011054013  
ՀՎՀՀ 02647057

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

**ԿԱՏԱՐՈՂ**

«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ  
ք. Երևան, Ազատության պողոտա 24/1  
«Ամերիա քանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1570069343740100  
ՀՎՀՀ 00228737

«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի տնօրեն՝

**Է. Գազարյան**

(ստորագրություն)

Կ.Տ



**Տ. Ավագյան**

(ստորագրություն)

Կ.Տ

22 շեյն ԵՊԵԻ

Հավելված N 1  
2020թ. կնքված  
ՊԵԿ-ԲՄԽՕՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման
						Ժամկետը և հասցեն
1	72261110/504	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակի ներդրման խորհրդատվական ծառայություններ Տեխնիկական-բնութագիրը ներկայացված է ստորև	դրամ	100 000 000	1	Ներկայացված է տեխնիկական բնութագրում

\* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

CPV՝ 72261110/504

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակի և նրա ենթահամակարգերի ներդրման խորհրդատվական ծառայություններ  
Նպատակը

Մտեղծել և ներդնել հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի ավտոմատացման համակարգ՝ ըստ սույն տեխնիկական բնութագրի, այսուհետ՝ համակարգ:

Ծառայությունների կատարման վերջնաժամկետ է սահմանված այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 410 օրացուցային օրվա ընթացքում (ժամանակացույցը կցվում է):

## Ներդրվող ծառայություններ

Ծառայությունների ամբողջական շրջանակը ներառում է.

1. Համակարգի ստեղծման համար անհրաժեշտ տեխնիկական առաջադրանքի մշակում, ծրագրավորում և համակարգի գործարկում՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8.2 հոդվածի և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածի դրույթների և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի:
2. Փոփոխություններ «Հարկատու 3» համակարգում:
3. Ներդրված համակարգի երաշխիքային սպասարկում՝ ծրագրի հանձնում-ընդունումից հետո՝ մեկ տարի ժամկետով:

## Ներդրվող համակարգի նկարագրություն

Համակարգը պետք է ապահովի հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի ավտոմատացումը: Ստանալով վերադարձի դիմումները և համադրելով այն համակարգում առկա այլ տվյալների հետ ինքնաշխատ պետք է գեներացվի համապատասխան եզրակացություն և ուղարկվի ֆինանսների նախարարություն՝ վերադարձի կատարման համար: Դիմումի ընթացքի բոլոր փուլերում շահառուներին պետք է ուղարկվեն ծանուցումներ: Եզրակացության համար օգտագործված տվյալների փոփոխության դեպքում՝ օրինակ եկամտային հարկի ճշտման դեպքում, այդ փաստաթղթերին պետք է տրվի համապատասխան կարգավիճակ և ապահովվի ճշտման գործընթաց:

Համակարգը պետք է ներառի ներքոնշյալ ենթահամակարգերը.

1. Եկամտային հարկի վերադարձին վերաբերող էլեկտրոնային փաստաթղթեր գրանցելու համար նախատեսված էլեկտրոնային հարթակ: Հնարավորության դեպքում այն կարող ներառվել «ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊՈՐՏԱԼ» համակարգում:

Ենթահամակարգը պետք է ունենա հետևյալ բաժինները.

- Շահառուների վճարած եկամտային հարկի վերադարձի էլեկտրոնային դիմումների մուտքագրման և գրանցման համար նախատեսված էջ:
  - Դիմումների գրանցամատյանի էջ, որտեղ կպահպանվեն բոլոր ներկայացված դիմումները՝ իրենց համապատասխան կարգավիճակներով:
  - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ծանուցումների էջ:
  - Եկամտային հարկի վերադարձ կատարելու մասին եզրակացությունների էջ:
  - Հաշվետվությունների էջ:
2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Հարկատու 3» համակարգում հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի գումարների վերադարձին վերաբերող փաստաթղթերի գրանցամատյաններ և հաշվետվություններ: Շահառուների անհատական տվյալների, նրանց կողմից ներկայացված դիմումների, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմված եզրակացությունների, դիմումների ընթացքի (բավարարման կամ մերժման) վերաբերյալ ծանուցումների, հայտարարությունների, հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Ենթահամակարգը պետք է ունենա հետևյալ բաժինները.

- Շահառուների վճարած եկամտային հարկի վերադարձի դիմումների գրանցամատյան: Բաժնում պետք է առկա լինեն գրանցված դիմումների տվյալները, մշակման կարգավիճակները և կապը այլ փաստաթղթերի հետ:
- Եկամտային հարկի վերադարձ կատարելու մասին եզրակացություններ:
- Շահառուների գրանցամատյան:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ծանուցումներ և հայտարարություններ:
- Եկամտային հարկի ճշգրտված հաշվարկների արդյունքում եկամտային հարկի նվազեցման կամ ավելացման դեպքում շահառուներից հետ գանձման կամ վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարների հաշվարկ և հաշվառում (հաշվարկի տրամաբանությունը կարող է տարբերվել կախված կոնկրետ դեպքից, օրինակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ եկամտային հարկի ճշգրտված հաշվարկների արդյունքում եկամտային հարկի նվազեցման դեպքում շահառուից հետ գանձում առաջանում է, եթե վերջինս չունի հարկային գործակալ (ՀԳՊԱ վարձու աշխատող), իսկ հարկային գործակալ ունենալու դեպքում, փաստացի վերադարձված եկամտային հարկի գումարի և եկամտային հարկի գծով ճշտված հարկային պարտավորության տարբերության չափով եկամտային հարկի գծով պարտավորությունը առաջանում է հարկային գործակալին):
- Շահառուներին վերադարձված եկամտային հարկի վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ հաշվետու ժամանակաշրջանների:
- Շահառուին վերաբերող սկզբնական տեղեկատվության, կամ այդ տեղեկատվության փոփոխության դեպքում օրենսդրությանը դրա համապատասխանության կամ իրավական առումով հիմնավոր համարելու մասին՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության կողմից ձևավորած կարծիքների (համաձայնության կամ անհամաձայնության) տեղեկատվություն:
- Հաշվետվություններ՝ ենթահամակարգում ստացված/ գեներացված տվյալների հիման վրա:
- Մինչև համակարգի շահագործումը առկա տվյալները համակարգ մուտքագրելու համար նախատեսված բաժին:
- Տվյալների փոխանակում:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ԱՔՌԱ-ի /բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների/ Կենտրոնական բանկի միջև: Բանկային և վարկային կազմակերպություններից շահառուների հաշվառման մասին տվյալների ստացում (Կենտրոնական բանկի միջոցով, կամ այլ հնարավոր եղանակով)
  1. Տեխնիկական առաջադրանքի մշակում և տրամադրում ԱՔՌԱ-ին:
  2. Տեխնիկական առաջադրանքին համապատասխան ծրագրային մշակում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ:
  3. ԱՔՌԱ-ի և ֆինանսական կազմակերպությունների միջև տվյալների փոխանցման գործընթացի ապահովում ԱՔՌԱ-ի և նշված կազմակերպությունների կողմից:
  4. Եռամսյակային տեղեկանքների էլեկտրոնային եղանակով ստացման արդյունքում իրավական դաշտը կանոնակարգող որոշումների համապատասխանեցում նոր եղանակին:
  5. Համակարգի ներդրում եռակողմ՝ ֆինանսական կազմակերպությունների, ԱՔՌԱ-ի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջև:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ կենտրոնական գանձապետարանի միջև: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմված եզրակացությունների էլեկտրոնային եղանակով տրամադրում ՀՀ ֆինանսների նախարարությանը և վերջինիս կողմից եզրակացությունների կատարման վերաբերյալ հարկային մարմնին տեղեկատվության տրամադրում (կատարվել է, չի կատարվել, հետ է վերադարձվել)՝ անձի նույնականացման հնարավորությամբ, օրինակ՝ ըստ հանրային ծառայության համարանիշի կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի և պայմանագրի:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ կադաստրի կոմիտեի կառուցապատողի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համակարգ: Առցանց ռեժիմում ինքնաշխատ տեղեկատվության փոխանակման հնարավորության



ստեղծում այն տվյալների մասով, որոնց վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազայում տեղեկատվությունը բացակայում է:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ համակարգի միջև էլեկտրոնային ստորագրությունների վավերականության ստուգման համակարգ:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և եկամուտներ վճարող գործատուների միջև՝ վարձու աշխատողին վերաբերող տեղեկատվությունը ՀՀ օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում: Առցանց ռեժիմում ինքնաշխատ տեղեկատվության փոխանակման հնարավորության ստեղծում՝ հաշվետու եռամսյակի ընթացքում հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների և դրանցից հաշվարկված ու ՀՀ պետական բյուջե վճարված եկամտային հարկի գումարների վերաբերյալ տվյալների մասով, որոնց վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազայում տեղեկատվությունը բացակայում է:

### Փոփոխություններ «Հարկատու 3» համակարգում

«Հարկատու 3» համակարգի դերերի կառավարման բաժնում պետք է ավելացվեն համակարգում առկա էջերի հետ կապված իրավունքները:

«Հարկատու 3» համակարգի տեղեկատվական հաշվետվությունում պետք է ավելացվեն համակարգում առկա փաստաթղթերի տվյալները:

### Ներդրված համակարգի երաշխիքային սպասարկում

Երաշխիքային սպասարկումը պետք է գործի ծրագրի հանձնում-ընդունումից հետո՝ մեկ տարի ժամկետով:

Այն պետք է ներառի հետևյալ ծառայությունները.

- Համակարգի խնդիրների շտկում:
- Ներդրված համակարգին վերաբերող տեխնիկական խնդիրների առկայության դեպքում Կատարողի կողմից շահառուների հարցադիմումներին պատասխանելու հնարավորություն, աշխատանքի հետևյալ պայմաններով՝
  1. Միաժամանակ առնվազն 2 գծով զանգերի ընդունման հնարավորություն:
  2. Զանգերի և պատասխանների ձայնագրում:
  3. Պատվիրատուի համար զանգերի և պատասխանների ձայնագրությունների հասանելիություն:
  4. Աշխատանքային ժամերը աշխատանքային օրերին՝ 09:00-ից 18:00:
  5. Հիմնական համակարգերի («Հարկատու-3», Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ), դրանց բաժինների և ենթաբաժինների օգտագործելու անհնարին լինելու դեպքերում, աշխատանքային ժամերի երկարաձգում՝ համակարգի չաշխատած ժամերի չափով:
- Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի և հեռախոսազանգերի կառավարման և հաշվետվողականության ծրագրի սպասարկում:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան աշխատակիցների ուսուցանում:

### ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Պայմանագրով մատուցված ծառայությունների արդյունքները հանդիսանում են պատվիրատուի սեփականությունը: Պատվիրատուն իրավունք ունի օգտագործել, հրատարակել, փոխանցել, տեղափոխել դրանք իր հայեցողությամբ, առանց որևէ սահմանափակման՝ չխախտելով հեղինակների անձնական ոչ գույքային իրավունքները:

- Կատարողը պատվիրատուին է տրամադրում համակարգերի փոփոխությունների ծրագրային ապահովմանն առնչվող ամբողջ նյութերը (ծրագրային կոդեր, տվյալների շտեմարանի և այլ կիրառական ծրագրերի տեղակայման սցենարներ, կիրառական ծրագրեր, գրադարաններ, ֆայլեր, փաթեթներ և այլ ծրագրային ապահովումներ, որոնք հարկավոր են համակարգի բնականոն աշխատանքի և նոր ապարատային ապահովման վրա համակարգի ներդրման, կոնֆիգուրացման, շահագործման համար, համակարգերի ներդրումը նկարագրող մանրամասն փաստաթուղթ, որտեղ հմուտ մասնագետների համար հասկանալի ձևով նշված կլինեն համակարգերի ներդրման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, կիրառական սերվերները, գրադարանները, դրանց տարբերակները, ներդրման քայլերի հաջորդականությունը և այլն, համակարգերը նկարագրող տեխնիկական փաստաթղթերը) և այլ փաստաթղթերը:
- Կատարողը պատվիրատուին ներկայացնում և երաշխավորում է, որ.
  1. Պատվիրատուին տրված ծրագրային ապահովման կոդը և փաստաթղթերը ամբողջական են, պատշաճ կերպով կազմված և ճշգրիտ պատճեն են ծրագրային ապահովման վերջնական ընդունման ժամանակահատվածում շահագործվող ծրագրային ապահովման տարբերակի:
  2. Ցանկացած լրամշակումից հետո 30 օրվա ընթացքում Կատարողը պատվիրատուին կտրամադրի փոփոխված ծրագրային կոդը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը, որոնք նույնպես պետք է լինեն ամբողջական, պատշաճ կերպով կազմված և համապատասխանեն լրամշակված ծրագրային ապահովման գործող տարբերակին:
  3. Ծրագրային կոդը կպարունակի ողջ տեղեկատվությունը՝ ընթեռնելի տարբերակով այնպես, որ ծրագրավորողը կամ վերլուծաբանը կարողանա պահպանել և բարելավել ծրագրային ապահովումը: Ծրագրային կոդը և համապատասխան փաստաթղթերը պետք է պարունակեն ծրագրավորողի բոլոր մեկնաբանությունները, տեղեկատվության մոդելները, գործընթացների հերթագայության սխեմաները և այլն:

Ծրագրային ապահովմանն առնչվող ամբողջ նյութերի պատրաստումը և տրամադրումը առկա համակարգերի համար չի նախատեսվում, սակայն ցանկացած լրամշակումից հետո 30 օրվա ընթացքում Կատարողը պատվիրատուին պետք է տրամադրի փոփոխված ծրագրային կոդը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը, որոնք նույնպես պետք է լինեն ամբողջական, պատշաճ կերպով կազմված և համապատասխանեն լրամշակված ծրագրային ապահովման գործող տարբերակին:

#### ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Կատարողը պարտավորվում է ներդրվող հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակի և նրա ենթահամակարգերի սպասարկման ծառայությունների մատուցման ժամանակ չբացահայտել նրան հասանելի դարձած տեղեկատվությունը: Տեղեկատվության չբացահայտման վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Կատարողի հետ կկնքվի երկկողմանի պայմանագիր:
2. Կատարողի հետ կկնքվի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակի և նրա ենթահամակարգերի ներդրման, գործարկման, սպասարկման և ուսուցման խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացի մասին համաձայնագիր» (Service level agreement), որով կկարգավորվեն բարձրացվող հարցերը:
3. Կատարողը տրամադրում է համակարգ (Project management software), որը հնարավորություն կընձեռի պատվիրատուին առցանց եղանակով ձևակերպել առաջադրանքներ և հետևել դրանց կատարման ողջ ընթացքին:
4. Վերը նշված բոլոր գործառույթները չեն վերաբերվում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայությանը և ընդգրկում են միայն հարկային ծառայության էլեկտրոնային համակարգերը և կապուղիները:

Ծանոթություն\* - «Անհատական հաշիվների տեղեկատվական պորտալ» համակարգը ձևավորելիս, համակարգի լիարժեք և ճշգրիտ գործարկման նպատակով, անհրաժեշտ է հաշվի առնել նաև ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված վճարված եկամտային հարկի փոխհատուցմանը վերաբերող օրենսդրական, իրավական և դրանից բխող ենթաիրավական նորմատիվ ակտերով նախատեսված, հետագայում նաև նախատեսվող փոփոխությունները:

1. Եկամտային հարկի վերադարձին վերաբերող էլեկտրոնային փաստաթղթեր գրանցելու համար նախատեսված էլեկտրոնային հարթակ: Հնարավորության դեպքում այն կարող է ներառվել «Անհատական հաշիվների տեղեկատվական պորտալ» համակարգում:

- Շահառուների վճարած եկամտային հարկի վերադարձի էլեկտրոնային դիմումների մուտքագրման և գրանցման համար նախատեսված էջ (դիմումներ, կից փաստաթղթեր),
- Դիմումների գրանցամատյանի էջ,
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ծանուցումների էջ,
- Եկամտային հարկի վերադարձ կատարելու մասին եզրակացությունների էջ,
- Հաշվետվությունների էջ:

